

ՄԱՍԿ

Տարեկան գինը 10 ռուբլի, կես տարվանը 6 ռուբլի:
Ուսանելի համարները 5 կոպեկով:

Թիֆլիսում գրվում են միմյան խմբագրատան մէջ:

(տարաբաղադրացի գիտում են ուղղակի
Тифлиса, Редакция „Маск“)

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տոն օրերէն):

Յայտարարութիւն ընդունվում է ամեն շաբաթով:

Յայտարարութիւնների համար վճարում են
խւրաքանչիւր բառին 2 կոպեկ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Կովկասեան համալսարան: — Ներքին տե-
սութիւն: Ներքին լուրեր: Արտաքին տե-
սութիւն: Աֆգանիստան: Աւստրո-Ռուսական
Նամակ: Գերմանիայից: — Մշակիչ հեռագիրներ: —
Յայտարարութիւններ: — Բանասիրական: Հա-
յոց ուսումնարանների նախագիծ:

ԿՈՎԿԱՍԵԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

«Մշակի» երէկվայ համարում
մենք «Голосъ» լրագրից արտա-
տպեցինք մի յօդուած «Կովկա-
սեան համալսարանի» մասին: Ե-
ղուածը գրված է Կիւմիքի և ստո-
րագրված է մեզ համար մի ան-
յայտ ազգանունով:

Մենք առհասարակ համակրում
ենք ամբողջ յօդուածին, մանա-
ւանդ ինչ որ վերաբերվում է հե-
ղինակի առաջարկութեանը թոյլ
տալ ընթերցանական զարգացումը ա-
ւարտած աշակերտներին մոտենել
համալսարան: Հեղինակը շատ ու-

ղեղ է նկատում որ Կովկասում
անհրաժեշտ հարկաւոր է այժմ մի
համալսարան, երկրորդ թէ բնագի-
տական, թէ պատմական և թէ
լեզուագիտական կողմից հետազո-
տելու համար:

Բայց մի բանի մէջ մենք հա-
մաձայն չենք հեղինակի հետ, այն
է որ նրա կարծիքով «Քուլթայիս»
քաղաքը, որպէս համալսարանա-
կան քաղաք, առաւելութիւն ունի
Թիֆլիսի հետ համեմատելով:

Հեղինակը չէ ապացուցանում
իր ասածը: Եթէ նրա բոլոր դա-
տողութիւնները հիմնվում են այն
իրողութեան վրա, որ «Քուլթա-
յիս» գրեթէ նոյնքան դրամական
միջոց է նուիրել ապագայ Կովկա-
սեան համալսարանի կառուցման
գործին, որքան Թիֆլիսը, — այդ
դեռ ոչինչ չէ նշանակում: Վաղը
Բագուն, Գանձակը կամ Երևանը

գուցէ աւելի էլ կը նուիրեն բան
թէ Թիֆլիսն ու «Քուլթայիս»
միասին վեր առած, — մի թէ այդ
կը նշանակէ որ Կովկասեան հա-
մալսարանը պէտք է հիմնվի այդ
գաւառական քաղաքներից միսի
մէջ:

Համալսարանը կարող է աւելի
լաւ աշողվել մի մեծ, կենտրոնա-
կան քաղաքում, քան թէ մի ան-
շան գաւառական տեղում: Հա-
մալսարանը պէտք ունի հասարակա-
կան զարգացած կենտրոն: Թիֆլի-
սում կան զանազան ուսումնական
ընկերութիւններ, կան զբաղաւա-
ռանոցներ, տպարաններ, կայ մու-
զէում, կայ հրապարակական գրա-
դարան, կան հիւանդանոցներ, կայ
բժշկական ընկերութիւն, և այլն...
Թէ համալսարանի ուսումնական
յարաբերութիւնների, թէ ուսա-
նողների ուսման հետուիթեան հա-

մար, թէ վերջապէս երիտասարդ-
ների կենտրոնի համար Թիֆլիսը
ներկայացնում է շատ և շատ
հեշտութիւններ և յարմարութիւն-
ներ, համեմատելով մի փոքրիկ
գաւառական քաղաքի հետ, որտեղ
դեռ նոր պէտք է ստեղծվի այն
բոլորը, որ արդէն կայ Թիֆլի-
սում:

Մենք երկիր Գերմանիա չէ,
որտեղ և փոքրիկ քաղաքներ ուս-
ման համար նոյնքան հեշտութիւն-
ներ և յարմարութիւններ են ներ-
կայացնում, որքան մեծ քաղաք-
ներ:

Չը պէտք է մոռանալ և այն,
որ մեր չքաւոր ուսանողներից
շատերը, ինչպէս զիմնադիտ լինե-
լու ժամանակ, այնպէս էլ ուսա-
նող գաւառային, ստիպված կը լի-
նեն իրանց ապրուստը պահպա-
նել տների մէջ գաստատութիւն

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՀԱՅՈՑ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐ- ՊՈՒԹԵԱՆ ՄԻ ՆԱԽԱԳԻՏ

Ի նկատի ունենալով մեր ազգի երեք գլխաւոր
դասակարգի բաժանվելը, այն է՝ երկրագործաց,
արհեստագործաց և վաճառականաց դասակարգերը
և խորին կերպով համազօր լինելով, որ ազգի
մը կենտրոն պահանջներն են միայն ծնունդ և առա-
ջնորդում ուսումնարաններին, վստահութեամբ մենք հարկա-
ւոր ենք համարում բոլոր մեր ուսումնարանները բա-
ժանել 5 կարգի (ա) Երկրագործական հայոց հոգեւոր
երկսեռ ուսումնարաններ զիւղերում, (բ) Արհեստա-
կան հայոց հոգեւոր երկսեռ ուսումնարաններ քա-
ղաքներում, (գ) Վաճառականական հայոց հոգեւոր
երկսեռ ուսումնարաններ քաղաքներում, (դ) Թե-
մական դպրոցներ, վերագրեալ երեք կարգի ու-
սումնարանների համար ուսուցիչներ և վարժու-
նէր պատրաստելու համար հայաբնակ բազմաթիւ
տեղերում, (ե) Հոգեւորական ուսումնարաններ
մեր եկեղեցեաց համար պաշտօնական միայն պատ-
րաստելու նպատակաւ: Այս տեսակ ուսումնա-
րանները հիմնել վաղեմութեամբ և թեմական առաջ-
նորդների անմիջական քաղաքներում:

Գիւղերում հիմնվելը մանչեւ երկրագործա-
կան ուսումնարաններում պէտք է միայն մտցնել
հայոց աշխարհաբառ և ուսաց լեզուներից ուղիղ
կարգով, զբիւլ և թարգմանել: Թուրքաբնակները
չորս հասարակ գործողութիւնները ամբողջ թուե-
րի և կոտորակների վրա կրօնից՝ հին և նոր կը-
տակարանների միայն համառօտ պատմութիւնը:
Ժամանակակից մեր ազգի համառօտ պատմութիւն-
նը: Երկրագործութիւնից՝ համաձայն տեղի դիրքին
և կլիմայական պայմաններին մտցնել հետեւեալ ա-
ռարկաներից մի կամ աւելին, որը են, հողագոր-
ծութիւն, անասնաբուծութիւն, այգեգործութիւն,
խաչաքանութիւն, մեղրապահութիւն, թռչնա-
պահութիւն, շերտապահութիւն, իսկ եթէ հարկը
ստիպէ, կարելի է մտցնել ևս մի կամ աւելի ար-
հեստներ: Վերագրեալ բոլոր առարկաները անհրա-

ժեշտ ենք համարում սովորեցնել աշակերտաց դու-
ղեմից կերպով թէ տեսականապէս և թէ գործ-
նականապէս, այնպէս որ ուսումնարան ուսանող-
ը կարողանայ իմանալ վերագրեալ գործնական
առարկաներից գոնէ միսը, և մտաւորապէս էլ
այնչափ զարգացած լինի, որ նա կարողանայ սեպ-
հականացրած գործնական առարկան հետզհետէ
լինելուցին կատարելագործել: Ըստ մեր դատման
այս տեսակ ուսումնարանների ուսման չըջանը
հարկաւոր է ընել գոնէ 5 տարի:

Գիւղական աղջկանց ուսումնարաններում մտց-
նել հայոց աշխարհաբառ և ուսաց լեզուների ու-
ղիղ կարգով, զբիւլ և թարգմանել: Թուրքաբնակ-
ութիւնից՝ հասարակ գործողութիւնները ամբողջ
թուրքի և կոտորակների վրա կրօնից՝ հին և նոր
կտակարանների միայն համառօտ պատմութիւնը և
մեր ազգի ժամանակակից կարճառօտ պատմու-
թիւնը: Տնտեսութիւն, այսինքն բրդից, բամբակից,
կանեփից և մետաքսից գործել, ձեւել և կարել զա-
նազան գործածելի նիւթեր, պատրաստել կաթից,
իւղից և ձաթից զանազան մթերքներ ու սովոր-
եցնել սրանց պահպանելու եղանակները: Սովոր-
եցնելու ձեւը և ուսման չըջանը ընել նոյնը, ինչ
որ մանչերի ուսումնարանների համար վերել յի-
շեցիքը:

Արհեստական մանչերի քաղաքական ուսումնա-
րաններում, համաձայն քաղաքի և սրա չըջանքի
պահանջներին, մենք հարկաւոր ենք համարում
մտցնել հետեւեալ արհեստներից մի կամ աւելին,
որը են՝ հիւանդութիւն, կոշիկագործութիւն, դերձա-
կութիւն, դարբնութիւն, քարանձաքութիւն և կաղ-
մարարութիւն, իսկ այս արհեստներին նպատակ
առարկաներից՝ գծագրութիւն և նկարչութիւն:
Թուրքաբնակներից՝ հասարակ գործողութիւննե-
րը ամբողջ թուրքի և կոտորակների վրա: Հայոց
աշխարհաբառ և ուսաց լեզուներից՝ ուղիղ կար-
գով, զբիւլ և թարգմանել: Կրօնից՝ հին և նոր կը-
տակարանների միայն համառօտ պատմութիւնը և
հայոց ազգի ժամանակակից պատմութիւնը: Գա-
սախօսութեան ձեւը և ուսման չըջանը ընել համա-
ձայն գիւղական ուսումնարաններին:

Արհեստական աղջկանց քաղաքային ուսումնա-
րաններում մենք հարկաւոր ենք համարում մտցնել
հետեւեալ առարկաները՝ հայոց աշխարհաբառ և
ուսաց լեզուներից ուղիղ կարգով, զբիւլ և
թարգմանել: Թուրքաբնակներից՝ հասարակ գոր-

ծողութիւններն ամբողջ թուրքի և կոտորակների
վրա կրօնից՝ հին և նոր կտակարանների համա-
ռօտ պատմութիւնը և հայոց ազգի ժամանակա-
կից կարճառօտ պատմութիւնը: Տնտեսութիւնից՝
բրդից, բամբակից, կանեփից և մետաքսից
գործել, ձեւել և կարել կենտրոն հարկաւոր նիւթեր
և խոհարարութիւն: Գասախօսութեան ձեւը և ուս-
ման չըջանը թուրքի նոյնը:

Վաճառականական երկսեռ քաղաքային ու-
սումնարաններում մտցնել հայոց աշխարհաբառ,
ուսաց և ֆրանսիերէն լեզուների կանոնաւոր ըն-
թերցանութիւնը, զբիւլ և թարգմանել: Թուրքա-
բնակներից՝ թուրքաբնակական առաջի ամբողջ մա-
տը: Վաճառականական ժամանակակից ընդհանուր
պատմութիւնը և աշխարհագրութիւնը և ընդար-
ձակ տօմարակալութիւնը: Կրօնագիտութիւնից՝ հին
և նոր կտակարանների համառօտ պատմութիւնը:
Ուսման չըջանը թուրքի նոյնը, այսինքն գոնէ հինգ
տարի:

Վերագրեալ երեք կարգի ուսումնարանների հա-
մար ուսուցիչներ և վարժուհիներ պատրաստելու
նպատակաւ թեմական երկսեռ դպրոցներում հար-
կաւոր է մտցնել երեք բաժանմունք՝ երկրագործա-
կան, արհեստական և վաճառականական: Մենք
բաժանմունքում ուսանողը կը մնան գոնե երեք
տարի, որոնցից երկու տարին գործ կը զբիւլ ու-
սանողին իր ընտրած մասնագիտութեան մէջ
կատարելագործելու համար, իսկ վերջի տարին
գործ դնել մանկավարժութեան դիրքին ձեւերի և
եղանակների մէջ կրթվելու համար:

Վերջապէս եկեղեցական պաշտօնական պատ-
րաստելու համար հարկաւոր է մեզ ունենալ հոգե-
ւորականաց դպրոցներ, որոնց մէջ կարելի է պատ-
րաստել կրթված եկեղեցական պաշտօնականներ:
Այս տեսակ ուսումնարաններում, ըստ մեր դատ-
ման, հարկաւոր է մտցնել հայոց աշխարհաբառ և
գրաբառ լեզուն, ուսաց և զարգիչներն լեզուները:
Նոյն ազգաց եկեղեցական պատմութիւնները,
թուրքաբնակներից՝ հասարակ գործողութիւնները
ամբողջ և կոտորակների վրա և ձայնագրութիւն:
Ուսման չըջանը թուրքի նոյնը:

Վերագրեալ 5 տեսակ ուսումնարաններ հիմ-
նել և հիւանդները կարողել վերածել կարող է
պահանջել բաւական ժամանակ, ուստի մենք
խորհուրդ ենք տալիս անտեսա- ուսումնական
ժողովին իր կազմակերպութիւնից անմիջապէս

վերջը, ներկայումս եղած բոլոր ուսումնարան-
ներում գործողներին նշանակել Թիֆլիսում
կոնկրետական հարցաքննութիւններ այն ա-
ռարկաներից, որոնցից ցանկանում են ուսուցիչ
կամ վարժուհի դասախօսել: Այս հարցաքննու-
թեան ժամանակ հարկաւոր է ի նկատի ունենալ
վերագրեալ հինգ կարգի ուսումնարանների պրո-
գրաման և աւելի յաջող հարցաքննութիւն բռնու-
ղին տալ ուսուցչական վկայական և նշանակել
նորան մի համապատասխան ուսումնարանի մէջ
ուսուցիչ կամ տեսուչ: Ուսուցչական վկայական
է պաշտօն ստանալու օրից, մանկավարժական աս-
պարիզում իւրաքանչիւր գործող անձը պիտի սկսէ
չափաւ հասցիլ արկղի իրաւունքներով և պար-
տադիր կը լինի նրան իր ուսուցիչի մի որոշեալ
տոկոս վճարել 20—25 տարի անընդհատ յօդուած
նոյն արկղի իսկ ուսուցչական վկայականի ար-
ժանի չեզոք անձին պէտք է անմիջապէս հեռաց-
նել մանկավարժական ասպարիզից:

Գիւղական ուսումնարանների համար հարկաւոր
է նշանակել առանձին թեմական վերատեսուչներ
իսկ քաղաքայինների և եկեղեցականների համար
առանձին, ամեն միսին յանձնելով ոչ աւել քան
50 երկսեռ ուսումնարան: *)

Թեմական վերատեսուչները պիտի են այցելել
անշուշտ իւրաքանչիւր տարի իրանց յանձնած
բոլոր ուսումնարանները և տալ իւրաքանչիւր
ուսումնական տարվայ վերջը իրանց վիճակներում
գտնվող դպրոցներին տնտեսական և ուսումնական
ընթերցան մանրամասն հաշիւներն անտեսա- ու-

*) Այժման թեմական վերատեսուչներին անու-
րոշ թուով ուսումնարաններ յանձնվելով, նորա չին
կարողանում ուսումնարանների վրա ոչ թէ միայն
հսկել, այլ տարիներով նոյնա երեսներն անգամ
տեսնել:

*) Թեմական վերատեսուչաց հաստատութիւնը և
արձակի մը պէտք է լինի անտեսա- ուսումնական
ժողովի անմիջական իշխանութեամբ:

աներկով, որովհետև ապրումն ուրիշ աղբյուր չունենալով... Իսկ թիֆլիսի պէս մեծ քաղաքում աւելի հեշտ է գտնել մասնաւոր դասերը, քան թէ Քութայիսի պէս փոքրիկ քաղաքում:

Մենք անձամբ ճանաչում էինք ուսանողներին թէ Ռուսաստանում և թէ արտասահմանում որոնք ապրում էին դասատուութեամբ աներկ մէջ, գրապահութեամբ մագաղանների մէջ, թղթեր արտադրելով և այլն... Այդ բոլորը աւելի հեշտ է մեծ քաղաքում, քան թէ փոքր քաղաքում:

Ուրիշ կէտ էլ կայ, որի վրա անհրաժեշտ է ուշադրութիւն դարձնել Ռուսանոց երիտասարդութեանը չէ կարելի արգելել իր օրվայ պարապմունքները վերջացնելուց յետոյ, անցնել ժամանակ ընկերութեան, ընտանիքների մէջ, կամ զուարճանալ ուրախ, բայց աղին կերպով անցնել երեկոն: Մեծ քաղաքում միշտ հնար կայ ընտիր ընտանիքներում, թատրոնում, ուսումնական կամ մի այլ մտաւորապէս զարգացնող մի ընկերութեան մէջ անցնել ժամանակը, այն ինչ փոքրիկ քաղաքում, որ զուրկ է ընկերական, հասարակական կենսութեան, հասարակական կենսութեան, օրվայ ծանր պարապմունքներից հանդուստնալով կարօտ ուսանող երիտասարդութեանը մնում է միայն մի բան, — այն է քէֆի, արեւոցութեան, անկարգ կենսութեան դիմել:

Առաջ մենք բնութագրում ենք այնպիսի դաստիարակներ, որ թիֆլիսի քաղաքական քաղաք ընկերով, ղեկ ևս անպատրաստ է համարւում սարանական քաղաք ընկերով, իսկ այժմ, երբ ինդիւստրիալ Մարդկային համայնքում մի համայնքային հիմնելու, մարդիկ են գտնւում, որոնք առաջարկում են համայնքային հիմնել ոչ թէ Մարդկային միակ մեծ, իր յարմարութիւններով մայրաքաղաքին քիչ թէ շատ նման քաղաքում, այլ մի աննշան գաւառական, կենտրոն և ուսման համար ամեն յարմարութիւններից զուրկ քաղաքում:

Չարմանալի է ինչպէս մենք ամեն բանի մէջ անյաջողաբար ենք վարվում: Իսկ մենք Քութայիսի անարժան ենք համարել վայելել մինչև անգամ երկաթուղու գծի յարմարութիւնը, իսկ ենք նրանից այդ իրաւունքը, այդպիսով մեռցրել ենք այդ քաղաքի մէջ:

Չարմանալի է ինչպէս մենք ամեն բանի մէջ անյաջողաբար ենք վարվում:

Իսկ մենք Քութայիսի անարժան ենք համարել վայելել մինչև անգամ երկաթուղու գծի յարմարութիւնը, իսկ ենք նրանից այդ իրաւունքը, այդպիսով մեռցրել ենք այդ քաղաքի մէջ:

առեւտրական, հասարակական, ընկերական, մտաւոր կենտրոն վերջին նշանը, — իսկ այժմ յանկարծ նշան Քութայիսի ուղղում ենք շնորհի մի համալսարան:

Միթէ «Голосъ» լրագրի պատւելի աշխատակցի կարծիքով համարւում կարող է աշուղակ միայն հասարակական, ընկերական, առեւտրական, ուսումնական կենտրոնից զուրկ մի տեղում:

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Մեզ խնդրում են յայտնել հետևեալը: «Առաջին կիրակի, ամիս 27-ին, Վարդապետ տօնին, Կոթորի հայոց Ս. Կարապետ եկեղեցու տօնախմբութիւնն է, որ կը կատարվի մեծ հանդիսով»:

Վաղաք գաւառից մեզ գրում են, որ ԱՍՏԱՆԻՅԱՆԻՆ գիւղի բնակիչ Մովսէսաւի, որ նշանաւոր աւագակապտ է ամբողջ գաւառում, ունի իր համար փոքրիկ խումբ, որի աւագակապտները ամենքին անհանգստացնում են: Այդ աւագակապտը գողանում են զինվորներից մի զմեջ, եղ. կամ ձի և յետոյ իրանք յայտնւում են տիրոջ պահանջով 10 կամ 20 բուր, իբրև թէ իրանք գտել են այդ կենդանիները և խել են գողութիւն: Բայց այս օրերս այդ աւագակապտը անցնելու աւելի էլ սարսափելի բաներ գործել, նրանք հանում են զինվորներից նմանեցնելով մարմինները և կախում են նրանց ծաւերի վրա: Քննութիւնը արգէն ըսկված է:

անշարժ կաշեքի մատակարարելը և ուսումնական մասի ընդհանուր կանոնադրելը:

4. Տեսեալ—ուսումնական ժողովը գործունէութեան մշտական տեղը պէտք է լինի թիֆլիս քաղաքում:

5. Տեսեալ—ուսումնական ժողովը իր անդամների միջից ընտրում է բաղմունքները ձայների մի գանձապահ մի քարտուղար Սոցա պարտադիր է յիշեալ պաշտօնները վարելը գոնէ մի տարի ժամանակաւ:

6. Տեսեալ—ուսումնական ժողովը կը գումարվի, բայց եկեղեցական և պետական տօն օրերից, ամենայն օր իսկ երկու տարին անգամ տնտեսա-ուսումնական ժողովը պարտական է գումարել մի ընդհանուր ժողով, ուր պէտք է մասնակցեն, բացի թեմական վերատեսչներից ու հայ թիթիների խմբագիրներից նաև բոլոր մեր ուսումնարանների տնտեսները: Ընդհանուր ժողովի նստելի ժամանակ բոլոր վերադրեալ մասնակից եղող անձինքներն ունեն վճարական ձայն: Նախագահը, ինչպէս տնտեսա-ուսումնական ժողովի նստելի ժամանակ, նոյնպէս և ընդհանուր ժողովի նստելի ժամանակ մնում է նոյնը, եթէ բացակայ չէ. ի հակառակ դէպք բաղմունքները ձայների ընտրվում է ժամանակաւոր փոխ-նախագահ:

7. Տեսեալ—ուսումնական ժողովը պարտական է իւրաքանչիւր տարի տալ մանրամասն հաշիւ վեհափառ կաթողիկոսին առանձին կերպով և ազգին, հայ լրագրիչների միջոցաւ, առանձին կերպով:

8. Տեսեալ—ուսումնական ժողովը պարտական է ընտրել բաղմունքները ձայների իր անդամներից երեքին, որոնք երկու տարվա ընթացքում պէտք է այցելեն բոլոր մեր ուսումնարանները և յետոյ մանրամասն հաշիւ տան հանդերձ իրանց նկատողութիւններով տնտեսա-ուսումնական ժողովին, որը իր կողմից պարտական է հայ լրագրաց միջոցաւ յայտնել ազգին ի դիտութիւն:

9. Տեսեալ—ուսումնական ժողովը պարտական է կազմել ուսումնարանների համար պրոգրամներ, զանկ խիստ կերպով նոյն մէջ ընդունված դասընթացը:

սուսական ժողովին իսկ տնտեսները թեմական վերատեսչներին:

Այսպիսով, ըստ մեր դատման, մեր ուսումնարանների երկրորդ զիւարթ հիմքն էլ, այն է ուսումնական մասը, հիմնովին կերպով կազմակերպված կը լինի: Ուրեմն տնտեսա-ուսումնական ժողովը ուսումնարանաց երկու էական կէտերը, այն է տնտեսականը և ուսումնականը, վերոգրեալի համաձայն կազմակերպելուց վերջը, մեր ուսումնարանները, ուսուցչաց և ուսանողաց տարւոյում ու անախանձիկ զրոյթիւնները քանի մի ժամանակից յետոյ, համարձակ կարող ենք ասել, կը վերանորոգվեն իսկ ուրիշ կերպ փրկել մեր ուսումնարանները, թողնելով մէկ կողմ տնտեսա-ուսումնական ընդհանուր ժողովը, մեր կարծիքով, երբեք չենք կարող: Եւ որովհետև կենտրոնական տնտեսա-ուսումնական ժողովը անդամները պէտք է լինեն մեր ազգի ամենահմուտ և փորձառու տնտեսա-մանկավարժները, ուրեմն այս տեսակ անձերից կազմված կենտրոնական ժողովը միայն կարող պիտի լինի վերանորոգել մեր ուսումնարանների երկու էական հիմքերը: Եւ մինչև որ չը լինի յիշեալ վերանորոգութիւնը, մեզանում երբեք չեն կարող հետևողաբար ծաղկել ոչ երկրորդականութիւնը ընդհանրապէս, ոչ արհեստները, ոչ վաճառականութիւնը և ոչ էլ հոգեւորականաց դասակարգը: Կրկնում ենք, որ արտաքին տնտեսա-ուսումնական ժողովը, մենք բոլորովին, մենք բոլորովին կարող ենք փրկել մեր ուսումնարաններն ևս, ուրեմն և փրկել մեր ազգը, փրկել մեր ազգի պատմական ուղիղութիւնը:

Ընդհանուր ազգաց պատմութիւնը ունի իր մէջ շատ օրինակներ, որոնցից երկուսն էլ պարզ կերպով թէ ինչպէս շատ ազգեր իրանց նշանակութիւնը, անունները և մինչև անգամ գոյութիւնները կորցրել են, երբ նոյն հետզհետէ թուլացած են երկրագործութեան, արհեստագործութեան և վաճառականութեան մէջ: Ուրեմն ամենայն ազգ իր գոյութիւնը կարող է այն ժամանակ ապահով համարել, երբ նա զինքն ցերեկ անդադար մարդկային կենաց ընդհանուր ասպարէզի սէջ մտաւորապէս զարգանալով, ճիշդ է թափում յառաջադիմելով, երկրագործութեան, արհեստագործութեան և վաճառականութեան ընդարձակ ասպարէզների մէջ:

Այս ամենից վերջը հրաւիրում ենք մեր ընդհանուր ազգի Հայրապետին և մեր ազգի ընդհանուր շահերի վրա լուրջ կերպով մտածող անձանց ուշադրութիւնը ազգային ժառու և կենաց խնդրի ուսումնարանական ընդհանուր վերանորոգութեան հարցի վրա, որի կատարումը զիւարթալիս կախում ունի Նորին Վեհափառութիւնից և փորձառու ու հմուտ տնտեսագէտներից և մանկավարժներից:

Որովհետև, մեր կարծիքով, տնտեսա-ուսումնական ժողովը ձեռքը միայն կարող է լինել ուսումնարանական ընդհանուր վերանորոգութիւնը, ուսումնական աւելորդ չի լինի նոյն տնտեսա-ուսումնական ժողովը կազմակերպելու և իրաւունքը և եթ առաջարկել ընթերցողաց, որ հետեւեալն է:

1. Ռուսաստանի մեր եօթը թեմական վիճակաւոր առաջնորդներից իւրաքանչիւրը, իր թեմի կողմանէ, ընտրում է երեք փորձառու և հմուտ մանկավարժներ: Սրանք, զսան մէկ հոգի, եօթը թեմի կողմանէ հաւաքվում են թիֆլիս, ուր միայն գումարվելով կազմում են ընտրողական ժողովը նախագահութեամբ Վրաստանի և իմերէթի վիճակաւոր Առաջնորդի, և ընտրում են իրանց միջից կամ արտաքին ընտրողական ժողովը առաջադատակ արժանաւոր հայերից, բաղմունքները ձայների, եօթը թեմական անդամներ տնտեսա-ուսումնական ժողովին համար հինգ տարի ժամանակաւ հանդերձ մի կանգնեցնելով: Այնուհետև ընտրողական ժողովը արձանագործութիւն կազմելով, առաջարկում է իր ընտրած եօթը անդամները ի հաստատութիւն Վեհափառ կաթողիկոսին:

2. Այս եօթը ընտրված և հաստատված անդամներն ի միասին կազմում են տնտեսա-ուսումնական ժողովը նախագահութեամբ Վրաստանի և իմերէթի վիճակաւոր առաջնորդի, և այդ ժողովում բոլոր թեմական վերատեսչներն և հայ թիթիների խմբագիրներն ունեն միայն խորհրդական ձայն:

3. Տեսեալ—ուսումնական ժողովը առնում է իր անդամներից իրաւասութեան ներքոյ ներկայումս եղած և ապագայում բացուելիք բոլոր ազգային, հոգեւոր երկուսն ուսումնարանների շարժական և

ՎՈՒԲԱՅՈՒՅ մեզ գրում են որ այդպէս անտանկ շքեր են սկսվել, այնպէս որ մարդը չէ կարողանում հանգիստ անցնել իր ցերեկայ ժամերը: Յօրենի վերջ և այլ արմատաց գնդեր ընկել են, քանի որ հունձը սկսվել է: Այժմ ցորենի գինը 80 կոպէկ է պուրը և շուտով, երկի, ընկնելու է դարձեալ մինչև 40 և 30 կոպէկ:

Մեր թղթակիցը ՎՈՒԲԱՅՈՒՅ գրում է մեզ որ այժմ միտք կայ այդ քաղաքում ստորագրութիւն հաւաքել յօգուտ Կ. Պոլսի «Արարատեան» կամ միացած ընկերութեան: Նախարարութեան արդիւնքը կուղարկվի «Մշակի» խմբագրութեանը:

Շնորհակալութեամբ ստացանք Զ. Գրիգորեանցի «Կովկասեան դրամադանոցից» հրատարակած «Ընդհանուր աշխարհագրութեան» դասագրքի երկրորդ մասը, հեղինակութիւն Ն. Սիմոնեանցի: Տպված է թիֆլիսում, Յովհաննէս Մարտիրոսեանի տպարանում, ներկայ 1880 թւին:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՅԳԱՆԻՍՏԱՆ

Լօնդոնի լրագրիչների մէջ տպված է Զեդէկոսի փոխորդային հետեւալ հետադիր:

Կարուից հաղորդում են, որ Արդուրախման շուտով կը հասնի Չարիկաբու: Կարուից ուղարկած պատգամաւորութիւնը հանդիպել նրան յուլիսի 14-ին: Պատգամաւորները յոյս ունեն, որ գործը շուտով կը վերջանայ և որ Կոստանտին մէջ ապստամբ արեւմտեան զօրքեր չը կան: Կարուի շրջակայներում բոլորը հանգիստ է: Հաստատ տեղեկութիւններ են ստացված, որ Էյլաբլանի զիւարթ ոյժերը Նիւրշիկից հեռու չեն:

սաղաքները և սրանցից աւելի լաւերը ընտրելուց վերջը, սկսել նորերի կազմելը: Առանց տնտեսա-ուսումնական ժողովի վաւերացման, ոչ մի դատագրիչ չը պէտք է ընդունվի որ և լցէ ուսումնարանի մէջ:

10. Տեսեալ—ուսումնական ժողովը հաստատում է և արձակում թեմական վերատեսչներին, հոգաբարձուներին, տնտեսներին և ուսուցիչներին:

11. Տեսեալ—ուսումնական ժողովը պէտք է ունենայ իր կնիքը այլ մակագրով ակնիք հայոց տնտեսա-ուսումնական ժողովին:

12. Տեսեալ—ուսումնական ժողովի անդամների պաշտօնավարութեան հինգ տարին լրանալուց վեց ամիս առաջ, նոյն եօթը թեմի վիճակաւոր առաջնորդները ընտրում են երեք երեք անձինք, որոնք, գումարվելով թիֆլիսում, կազմում են ընտրողական ժողովը և ընտրում են եօթը նոր անդամներ, որոնց առաջարկում են ի հաստատութիւն Վեհափառ կաթողիկոսին: Հին անդամները վերնտնի են:

Մենք հաւատացած ենք, որ ազգային ուսումնարանական խնդր հարցով մեզանում շատերը զբաղված և հետաքրքրված են, ուստի մեզ շատ ցանկալի կը լինէր նոյն կարծիքներն էլ յօգուտ նոյն հարցի լսել կամ կարդալ, ինչպէս որ «Մշակի» այս տարվոյ № 5, 6, 7, 8, և 10 պատահեալ կարգաւ «Պրոգրամայի» խնդրի վերադրով մեծ. պ. Գրիգոր Նիկողոսեանի յօդուածը, որը զիւարթապէս մեզ զրդեց վաղուցվայ մեր մտադրութիւնը շտապեցնել, յայտնելով մեր բոլոր դիտելիքը հայոց ուսումնարանների կազմակերպութեան մասին: Վասն որոյ պարզ ենք համարում մեր խորին համակրութիւնը և շնորհակալութիւնը հրապարակապէս յայտնել մեծ. պ. Գր. Նիկողոսեանի, մասնաւոր «Մշակի» տպագրի խմբագրին, որը այդ հարցը յարուցեց առաջինը, խոսելով նրա վրա դեռ 1879 թուականի համարներում:

ՄԻՐ

3-5